№ 138 Յուլիսի 29 (Օգոստոսի 10) 1881 Յուլիսի 29 (Օգոստոսի 10) № 138

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Ստորագրողները դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողին 2 կոպէկ:

„Մ Շ Ա Կ"
ԼՐԱԳՐԻՆ ԿԱՐԵԼԻ Է ԳՐՎԵԼ
ԿԷՍ ՏԱՐՈՎ

Այսինքն յուլիսի 1-ից ներկայ 1881 թւի, մինչև յունվարի 1-ը 1882 թւի:

Բաժանորդութեան գինը 6 ռուբլ է: Գրվելու համար պէտք է ուղղակի դիմել խմբագրութեանը հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція „Мшакъ"

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ազգային ուսումնարաններ. Նամակ Գորուց. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլիա. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐ

Ուսումնականների և մանաւորապէս ուսուցիչների խումբը միաբերան գանգատվում են, թէ հայ հասարակութիւնը անտարբերութեամբ է վերաբերվում դէպի ազգային ուսումնարանները, հոգաբարձուները իրանց պարտականութիւնները խղճի մտօք չեն կատարում, ժողովուրդը նուիրատու չէ, ունևոր մասը չէ ուղարկում իր զաւակներին ազգային դպրոցները, և սորանց պէս մի անվերջ շարք դժգոհութեան և գանգատների: Ոչ ոք, որ փոքր 'ի շատէ հասկացողութիւն և տեղեկութիւն ունի մանկավարժական արդի վիճակից և քաղաքակիրթ ազգերի դպրոցներից, երբէք չի համաձայնվի մեր հայ ժողովրդին իր այդ մեծ պարտազանցութեան մէջ չը մեղադրել և անտարակոյս մեր հասարակութեան այդ սառնասրտութիւնը դէպի ազգային դպրոցները և ազգային կրթութիւնը, թէպէտ և ոչ միակ, բայց գոնէ գլխաւոր պատճառներից մէկն է, որ մեր դպրոցները այժմեան անկեալ դրութեան մէջ են և սպառնում են առաւել ևս ընկնել:

Սակայն պէտք է իմանալ, որ այդ հակընական երևոյթը ունի իր արդարացի պատճառները. վասն զի անհնարին է, որ հայ ազգը, այնչափ ծարաւ լինելով կրթութեան և ուսման,—մեր հայոցս մէջ կարծես թէ մի տեսակ ախտ է մտել զաւակներին ուսում տալ՝ բարձրից սկսած մինչև ամենաստոր շերտերը—այդ աստիճան սառը և անհոգ մնար դէպի ազգային դպրոցի գործը, եթէ նա չունենար խոր պատճառներ: Մի խոր անդիմադրելի համոզում պէտք է ունենայ ալէքսանդրապոլցի, շուշեցի, երևանցի, գանձակեցի հայը, որ արքունի ուսումնարաններ հիմնելու համար չէ խնայում իր հազարները, բայց խիստ դանդաղում է մի քանի ռուբլ կամ նոյն իսկ մի քանի ժամեր զոհել ազգային տեղական դպրոցին: Եւ որո՞նք են իրական շօշափելի պատճառները, որ հայ մարդը հեռու է մնում հայկական կրթութիւնից:

Որովհետև հայը ուսումից և կրթութիւնից իրական օգուտ է սպասում,—և անկարելի է նորան այդ բանում մեղադրել,—նա շատ շուտով իմացել է, որ մեր ազգային դպրոցները մի փոքր ինչ զգալի շահ չեն բերում: Եւ յիրաւի ի՞նչ օգուտ է բերում մի հայ դպրոց: Առնենք ամբողջ Կովկասում եղող ազգային դպրոցներից ամենանշանաւորը, Թիֆլիսի Ներսիսեան ուսումնարանը, որը թէ իր նիւթական միջոցներով և թէ իր բարեյաջող դիրքով՝ գտնվելով ուսուցիչների առատութեան տեղը՝ Թիֆլիսում՝ կարող պիտի լինէր մեզ պարզապէս ցոյց տալ իր մատուցրած շահը. մինչդեռ մի ռէալական դպրոցից կամ գիմնազիոնից ելնող աշակերտը, իր ձեռքին ունենալով իր վկայականը, իրաւունք ունի մտնելու պետութեան բարձրագոյն դպրոցները, ինչպէս համալսարան, ակադեմիա, տեխնիկական դպրոց, պօլիտեխնիկում և այլն, ո՞ր կընդունէին մեր Ներսիսեան դպրոցում աւարտած աշակերտին. համալսարանո՞ւմ, ակադեմիայո՞ւմ: Ոչ մէկ տեղ: Ներսիսեան դպրոցի աշակերտը չունի մինչև անգամ Տէր-Յակոբեանի մասնաւոր դպրոցի իրաւունքը: Մեր այդ ազգային Ներսիսեան դպրոցի ելնողի վկայականը կառավարութեան աչքում ոչինչ նշանակութիւն չունի. եթէ այդ թղթի կտորը այն խեղճ երիտասարդի համար մի արժէք ունի, այդ էլ տեսուչ պ. Բարխուդարեանի աչքումն է, որը սակայն Ներսիսեան դպրոցից վկայական չունեցողին էլ է ազգային դպրոցներում ուսուցիչ նշանակում. ուրեմն այդ մեր ազգային պարոն պաշտօնեայի համար էլ չունի այդ վկայականը մի արժէք: Էլ առաւել Ներսիսեան դպրոցի բարձրագոյն դասատանից դուրս եկողին իր վկայականով չեն ընդունի գիմնազիոնի ստորին երկու դասատանը:

Հիմա ո՞վ կարող է մեղադրել հայ ժողովրդին, որ իր զաւակը չէ տալիս ազգային դպրոց: Դպրոցը որոշում է մեր որդոց ապագան. ուրեմն ի՞նչպէս կարելի է պահանջել ծնողներից, որ նորանք բաց աչքով զրկեն իրանց որդկանցը իրաւունքներից և գիտութիւններից, որոնց նորանք կարողանում են ձեռք բերել ռէալական և միւս դպրոցներում: Եւ այսպէս պարզ յայտնվում է որ մեր ազգային դպրոցական կառավարութիւնը, որ կենտրոնացած է Էջմիածնում, չէ ջանացել և չէ էլ աշխատում ազգային դպրոցների համար իրաւունքներ և արտօնութիւններ ստանալու: Գուցէ մեզ ասեն, թէ այդ դժուար կամ նոյն իսկ անհնարին լինի: Երբէք: Ոչ միայն ֆինլանդացիք ունեն իրանց սեփական դպրոցները և համալսարանը, բոլորովին համահաւասար արքունի դպրոցներին, այլ Բալտեան նահանգներում գերմանացիք ունեն Դորպատում համալսարան և Ռիգայում, Միտավայում, Ռէվալում և ուրիշ այլ և այլ քաղաքներում մինչև 30 գիմնազիոններ, և նոյն իսկ Պետերբուրգում և Մոսկվայում գերմաներէն լեզուով 5 հատ բարձր դպրոցներ, որոնց ուսումնաւարտ աշակերտներն ուղղակի մտնում են համալսարան, առանց որ և է նախաքննութեան: Մի՞թէ մենք չենք կարող այդ իրաւունքները խնդրել:

Բայց 'ի հարկէ առաջ պէտք է որ ինքներս էլ մեզ այն ստացած իրաւանց արժանի կացուցանենք, իրաւ այն աստիճանով էլ ուսում տալով: Մի՞թէ մեզ ակադեմիայի իրաւունք չը տուին Էջմիածնի համար: Բայց թող անաչառ քննիչներ գնան մեր Գէորգեան ճեմարանը և քննեն ու տեսնեն թէ արդեօք այդ ճեմարանականները իրանց գիտութեամբ կարող են հաւասարվել գիմնազիոնի վեցերորդ դասատան աշակերտների հետ: Թող նոցանց ուսուցիչները իրանք վկայեն: Կամ էլ լաւ կը լինէր հէնց մեր ակադեմիայի պրոֆեսօրներին մի քննութեան ենթարկել՝ տեսնելու թէ ո՞վ ո՞ր է ուսած, և ո՞վ ի՞նչ գիտէ: Երևի կը յայտնվէր որ արքունի գիմնազիոնի բարձր դասատանց աշակերտները մեր հայ պրոֆեսօրներին единица կամ нуль կը դնէին:

Ուրեմն մեր դպրոցների էական սխալը նոցանց մէջ աւանդված գիտութեանց որակապէս չըլին լինելն է: Սա երկրորդ պատճառն է, որ հայը արքունի և մասնաւոր դպրոցները թողած՝ իր անգին որդու բաղդը չի յանձնի մի որ և է անստոյգ և թերակատար դպրոցի, ինչպէս են մեր ազգային դպրոցները: Վեր առնենք դարձեալ մեր Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը: Ի՞նչ է դորա տուած ուսումը: Ճշմարիտ է, դա խոստանում է հայերէն լեզուով աւանդել արքունի գիմնազիոնի ուսումը մինչև 6-դ դասատան լրումը: Բայց դժուար չէ համոզվել, որ Ներսիսեան դպրոցի ուսումը հազիւ է հասնում գիմնազիոնի 4-րդ դասատան: Հոգաբարձուք և տեսուչը քաջ գիտեն, որ Ներսիսեան աշակերտները գրաբար չը գիտեն, աշխարհաբար ուղիղ կէտադրութեամբ և առանց տառասխալի մի թելադրութիւն գրել չեն կարող, օտար լեզուներից ոչ մէկը (արդէն լատիներէնը և յունարէնը չը կայ) կարգին չեն սովորած, ռուսերէնի մէջ շատ տկար են, թուաբանութեան մէջ (իրանք մաթեմատիկա են ասում) պատահում է որ վեցերորդ դասատան աշակերտներ քննութեան ժամանակ 101,101 գրելում դժուարանում են ու չեն կարողանում: Եթէ Թիֆլիսի ազգային հոգևոր դպրոցում գիտութիւնը այդքան տըկար է, ի՞նչ պիտի լինի Շամախի, Շուշի, Երևան, Ալէքսանդրապոլ: Շամախու հոգևոր դպրոցը անզօր է այնտեղի արքունի քաղաքային դպրոցի հետ մրցելու. նոյնպէս և Երևանի և միւս տեղերի դպրոցները:

Ձեր արդիւնաբերութիւնը այդչափ խախուտ և տկար լինելով, ո՞վ վարժապետ, ուսուցիչ, վարդապետ, հոգաբարձու են պարոններ, մի՞թէ իրաւունք ունէք ազգից համակրութիւն պահանջելու: Հայը իր զաւակը այնպիսի տեղ չի ուղարկի, ուր նորան ոչ իրաւունքներ են տալիս, ոչ ուսում, ոչ գիտութիւն: Վաճառական հարուստ հայի հետ որ խօսում ես, թէ՝ „ինչ լաւ կը լինէր որ մի քիչ աւելի ուսում սովորած լինէիր", նա թէև համաձայնում է քեզ հետ արտաքուստ, բայց սրտում ծիծաղում է ինքն ասելով. թէ „այս սոված ուսումնականը ուզում է ինձ խաբել, մի քանի դասեր առնել ինձ, մի երկու օրուայ հացը ճարելու համար": Նա էլ հէնց նոյն կերպով է մտածում, ինչպէս որ մենք ցիգան հմայող կանայքը տեսնելիս, որոնք աղաչում են թէ „եկ, բաղդդ նայեմ" և որոնց պատառոտած ցնցոտիներին նայելով ասում ենք, „թէ դու բաղդի տեղը գիտենայիր, առաջ քեզ համար մէկը կը գտնէիր. սակայն քո նպատակը իմ երկու կոպէկս է": Մեր գիւղացին էլ, մեր քաղաքացին էլ նոյնն են մտածում. „Ախ, սիրելի վարժապետ, քո շատ ուսումը որ քեզ սոված է թողել, հաց չէ տալիս, դորանից ինձ տուած մի փոքր կտորը ինձ ի՞նչ օգուտ կը տայ: Ուղղական հաց. սեռ. հացի, ուղղական կերակուր, սեռ. կերակրոյ. սահմանական եղանակի ներկայ՝ ուտեմ, ուտես, ուտէ..., կատարեալ՝ կերայ, կերար, կերաւ: Հարցական դերանուն՝ ո՞վ: Անձնական դերանուն՝ ես, դու, նա: Այս խօսքերը, որչափ էլ ուզում ես կրկնիր, երեքնիր, դարձեալ հաց չի գնայ փորը": Եւ մեր դպրոցների վարժապետները ահա այսպիսի միջնադարեան աբեղայական ցնդաբանութիւններ են աւանդում, որ հիմա աշխարհքումս ոչինչ օգուտ չէ բերում:

Վարժապետ պարոններ. տեսէք՝ այս տարի այնքան առատ են հունձքերը որ մի քանի տարուայ կերակուր ունենք: Բայց մեծ վտանգի մէջ ենք որ բնութեան այդ մեծամեծ պարգևները փչանան: Ի՞նչու համար: Անձրևից. որովհետև մեր երկրացիք սովոր են իրանց խուրձերը բերել կալերում դիզել. և այս տարի, երբ ամառվայ միջոցին սովորականից դուրս շատ անձրև է գալիս, դա կը փտեցնէ նորանց ցորենի առհագին հարստութիւնը: Սովորեցրէք որ աղոց մաշար բերեն, տախտակ քաշեն, կալերի մօտ մեծ մարագներ շինեն, և իրանց հունձքերը ապահով տեղերում դնեն, որ նախապաշարումով հաստատված հին պապական թիւր սովորութիւնները տեղի տան լուսաւոր և օգտակար գաղափարների և գործերի: Այս կերպով ժողովրդի փորը իրաւ կը մտնէ այն հացը, որ Աստուած նորան ուղարկել է: Բայց „ուտեմ՝ ներգործական բայ, ես՝ ենթակայ, զհաց՝ հայցական խնդիր ուտեմին" ասելով ոչ դու կը կշտանաս, ոչ քո աշակերտը:

Ուրեմն՝ մէկ կողմից ազգային դաստիարակութեան կենտրոնը անհոգ է դէպի բուն գործը, իսկ միւս կողմից դպրոցներն էլ քանակութեամբ և որակութեամբ բնաւ և երբէք չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին:

Ա. Ա.

ՆԱՄԱԿ ԳՈՐՈՒՑ

Յուլիսի 25-ին

Խօսենք այժմ հայոց երկսեռ ուսումնարանի վրա, որ գտնվում է աննախանձելի դրութեան մէջ. Ուսումնարանի թէ տնտեսական և թէ ուսումնական մասը շատ դժբաղդ վիճակի մէջ է, քանի որ այստեղ պետական ուսումնարանները շատանում են, այնքան հայոց ուսումնարանը ընկնում է, որովհետև գորեցիներից շատերը իրանց որդոց այնտեղ չեն ուղարկում: Այս ուսումնարանը երբեմն լաւ դեր է խաղացել, քանի որ պետական ուսումնարանների թիւը քիչ է եղել, բայց այժմ դարձել է անկելանոց, չնորհիւ տեղիս հայ հասարակութեան, որն անտարբեր և սառն աչքով է նայում և որը աշխատում է փոխանակ առաջ տանելու, բարեկարգելու, աւելի յետադիմութեան հասցնել և մինչև անգամ անյայտացնել այդ ուսումնարանը։ Գործեցիներից մի քանիսները ասում են թէ ուսումնարանը գործունեայ հոգաբարձուներ չունի, լաւ ուսուցիչներ չը կան. պէտք է լաւ հոգաբարձուներ ընտրել, պէտք է լաւ ուսուցիչներ հրաւիրել և այլն, բայց սրանք լոկ խօսքեր են։ Իսկ միւսները ասում են թէ աւելորդ է այդ ուսումնարանը, ոչինչ չեն սովորեցնում, ի զուր է այդտեղ փող մսխվում.... Այսպէս կը խօսեն քանի որ ուրիշ խօսելու նիւթ չունեն և կը լռեն։

Այս երկու տարի է ուսումնարանի վերաբերութեամբ վէճ կայ։ Հասարակութիւնը բաժանված է երկու կուսակցութեան, որոնցից իւրաքանչիւրը իր կողմից հոգաբարձուներ է ընտրում և ուղարկում հաստատութեան համար, բայց ոչ մէկի հաստատութիւնը չէ գալիս, միայն հրամայած է հոգևոր կառավարութեանը հսկել ուսումնարանի վրա։ Ի հարկէ այստեղ էլ Էջմիածինը իր հաշիւները կունենայ։ Այժմ ուսումնարանի տնտեսական մասը յանձնված է հոգևոր կառավարութեան անդամ Ներսէս քահանային։ Այստեղ քանի որ պետական օրիորդական ուսումնարան չը կար, հայոց ուսումնարանում աշակերտուհիների թիւը երեք անգամ շատ էր աշակերտներից, բայց այժմ սեպտեմբերից բացվում է օրիորդական պրօգիմնազիա և հայոց ուսումնարանում կամ չեն լինի օրիորդներ և կամ եթէ լինեն, այն էլ թւով քիչ։ Հայոց ուսումնարանը չունի և լաւ ուսուցիչներ, կարծես թէ մեր ուսումնարանը բաղդ չունի։ Թէպէտ երբեմն գալիս են լաւ ուսուցիչներ հայոց լեզուի, բայց տարաբաղդաբար նրանք մէկ կամ երկու տարուց աւելի չեն մնում, և հոգաբարձուները մի անտեղի պատճառ գտնելով արձակում են նրանց։ Խնդրեմ ասէք, այն ուսումնարանում, որտեղ ուսուցիչները շուտ շուտ են փոխվում, ինչ յառաջադիմութիւն կը լինի։ Դեռ ուսուցիչը հազիւ թէ ծանօթանալով աշակերտների հետ, յանկարծ փոխվում է։ Կարծես թէ դիտմամբ են անում գործեցիները այս, որպէս զի հայոց լեզուն առաջ չը գնայ, որովհետև շատ են ատում այդ լեզուն, իսկ միւս առարկաների ուսուցիչները տարիներով են մնում։ Ռուսաց լեզուի ուսուցչուհին, որը տաս տարի է ուսուցչութիւն է անում և որը այս տաս տարվայ մէջ ոչ մի յառաջադիմութիւն չէ ցոյց տուել, սրան չեն կարողանում փոխել, որովհետև ուսուցչուհին շատ բարեկամներ ունի այստեղ, որոնք պահում են սրան իր պաշտօնի մէջ։

Զարմանալի ժողովուրդ են գործեցիները։ Բաւական չէ որ իրանք զրկված են իրանց մայրենի լեզուից և խօսում են օտար (վրացերէն) լեզուով, աշխատում են, որ իրանց որդիքն էլ զրկվեն այդ լեզուից։ Սրանք աւելորդ են համարում այդ լեզուն։ Եթէ հայ գործեցուն հարցնէք թէ դու ազգով ինչ ես, կը պատասխանի թէ հայ եմ, իսկ եթէ ասես թէ գիտես քո մայրենի լեզուն, կը պատասխանի, «էհ բան չունիս, ինչ հարկաւոր է հայերէն լեզուն, որտեղ է ընդունված»։ Ահա այս կարծիքի են սրանք իրանց մայրենի լեզուի վրա։ Ամօթ և հազար ամօթ գործեցիներին։ Ես չեմ կարող ասել թէ գործեցիները ինչու են իրանց որդոց օտար ուսումնարանում տալիս. պէտք է տալ, բայց իր ժամանակին, այսինքն երբ կրթված կը լինեն իրանց մայրենի լեզուով։ Բայց այս բանը չեն հասկանում. գոնէ պէտք է հասկացնեն։ Ո՞վ պէտք է հասկացնի, եթէ ոչ հոգևոր հայրերը, բայց սրանցից էլ անբաղդ ենք մենք՝ գործեցիներս։ Մեր քահանաների մեծ մասը տգէտ են, ուսումից զուրկ են։ Եկեղեցում չէք լսի ոչ կրօնի և ոչ ազգի վերաբերութեամբ քարոզներ, միայն կը լսէք հարուստ ննջեցեալների վրա ճառեր, որպէս զի տէրերը աւելի փող տան իրանց։ Այնպիսի հարուստ ննջեցեալներին գովում են, որոնք գովելու արժանի չեն։

Գօրին լինելով յաջորդարան, չունի այժմ յաջորդ, որովհետև ոչ մի յաջորդ չէ դիմանում գործեցիներին։ Վարդապետները լաւ են ճանաչել գործեցիներին և հոգևոր իշխանութիւնը ում որ նշանակում է,—չէ գալիս։ Մօտիկ ժամանակում Էջմիածինը նշանակել է այս տեղ մի վարդապետ, բայց նա մերժել է Էջմիածնի խօսքը ասելով. «փարաջէս և վեղարս սև են և երեսս էլ չեմ սևացնի գործեցիների մէջ, աւելի լաւ եմ համարում մահ անապատի մէջ, քան կեանքը գործեցիների հետ»։ Այսպէս հոգևոր կառավարութիւնը մնացել է անտէր, և կառավարվում է երկու անդամներով։

Սեպտեմբերից հայոց ուսումնարանը Ս. Աստուածածնայ եկեղեցու գաւթից տեղափոխվում է իր սեփական շինութեան մէջ, որ գտնվում է քաղաքային ուսումնարանին կից։ Ճշմարիտ ասած շատ յարմար շինութիւն է ուսումնարանի համար, բայց եթէ այստեղ տեղափոխվեց, դժվար թէ կառավարվի, որովհետև այն ժամանակ ուսումնարանը կը զրկվի տարեկան 600 ր. որ մինչև այժմս քրէհ էր բերում այս շինութիւնը. և այդ ժամանակ էլ հազիւ էր կառավարվում, այժմ ինչպէս կը կառավարվի։ Բացի երկսեռ ուսումնարանից, այնտեղ տեղափոխվում է և հոգևոր կառավարութիւնը, որտեղ պէտք է լինի և յաջորդարանը։ Եթէ իրաւ հոգևոր կառավարութիւնն ու յաջորդարանը տեղափոխվեց այստեղ, այն ժամանակ ուսումնարանին էլ ոչինչ տեղ չի մնայ։

Գօրեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 25 յուլիսի

Կը խնդրեմ խոնարհաբար ձեր յարգութիւնից որ տեղի տաք այս իմ նամակիս ձեր պատուական օրագրի մէջ ի պատասխանի ամսոյս 13-ին «Մշակի» 134 համարում տպած նամակին։

Գիտեմ, մի ոք և իցէ պարոն իբր իմ հարսանեաց հանդիսականներից, անձնական կրքից ըստիպված չօչափել է իմ տանու ծխատէր Մողնու եկեղեցու Արիստակէս աւագ քահանայի պատիւը, և ինչից ստիպված այդքան զրպարտութիւններ իր խօսակցութեան առարկայ է շինել և ձեր պատուական օրագրի նիւթ։ Ինչքան այժմ Ջինաստանում պատահած անցքերը անգիտելի են ինձ, այնքան ես անտեղի և զուր է մի ումն հանդիսականի ձեզ գրած նամակը Տէր Արիստակէսի մասին։

Տէր Արիստակէս հայրը է իմ տանու քահանան, որին ես մի քանի օր առաջ խնդրել էի, թէ ամսոյս 5-ին պէտք է ինձ պսակէ, և նա կիրակի օրը պայմանադիր եղեալ ժամանակին եկաւ և կատարեց իր պարտքը. նա ոչ ոքից ոչ երկիւղ ունէր և ոչ քաշվելու բան։ Ճշմարիտ եմ ասում, որ այն նամակը, որի մէջ զրպարտութիւններ են պարունակվում, բոլորովին զուր է, որովհետև երբ ձեր գազէթը ինձ մօտ կարդացին, բոլորովին զարմացայ, և ասացի թէ այդքան էլ սուտ բան կը գրեն մի կենդանի մարդու վրա։

Տէր Արիստակէս հօրը թող չը զգուշացնէ այն ստապատիր յօդուած գրողը, իրան զգուշացնէ, որ միւս անգամ իրաւունք չը տայ իր լեզուին և գրչին դուրս գալու այդպէս անիրաւ կերպով զրաւոր հանդէս և խաբել պարզամիտներին։

Գործը վերաբերում է Ծղնէթի տէր Սարգիս քահանային, որին ես առանձին տոմսակով չէի հրաւիրած. սխալ է այդ, այլ գուցէ կողմնակի կերպով հրաւիրված լինէր, ես ինչ կարեորութիւն ունէի նրան սպասելու և նրանից նեղանալու, քանի որ ես իմ քահանային իրան ժամանակին իմ տանս պատրաստ գտայ և որն էլ ինձ պսակեց։ Ահա այս նամակս գրում եմ ի միամտութիւն ձեր պատուական թերթը կարդացողներին, որ տէր Արիստակէս աւագ քահանան իր օգտի համար չէ խաբել տէր Սարգսին, ինչպէս ասում է նամակ գրողը, որովհետև ես էի տէր Արիստակէսին արդիւնք տուողը և ոչ թէ տէր Սարգիսը, այս վերջինին ես պատրաստ էի շահել իբրև քահանայ, եթէ իր ժամանակին կը գտնուէր։

Ճշմարիտ եմ ասում, երանի կը լինէր մեզ, եթէ մեր բոլոր հոգևորականները այնպէս լինէին իրանց պատիւը ճանաչող և բարոյական՝ ինչպէս տէր Արիստակէսը. յուսով եմ, որ այս խօսքիս համար կը վկայեն նրան ճանաչողները, և նոյն իսկ հոգևոր իշխանութիւնը։

Ես թողնում եմ նրա լաւ յատկութիւնների գովելը արժանաւոր գրչի, այն է, նրա արած ծառայութիւնները եկեղեցուն, թող այսքանով բաւական լինի պարոն հանդիսականը, թող չափը ճանաչէ և չը յարձակվի անտեղի կերպով այն անձի դէմ, որը յայտնի է Թիֆլիսի հասարակութեան։

Թէև չարժէր նրան պատասխան տալը, բայց գուցէ լռութիւնը տեղի տար կարդացողներին հաւատալու այն սխալ և զուր լուրին։

Յուսով եմ, որ դուք այս իմ նամակս կը տպէք ձեր գազէթի մէջ։

Եզօր Նաւտիկեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Բագու, յուլիսի 20

Ամսոյս 20-ին տեղիս հաշտարար դատարանում քննվեց շատ հետաքրքիր և չեղած գործ։ Գործն այս է. դեկտեմբեր ամսին տեսուչ Բագուի Մարդասիրական ընկերութեան ուսումնարանի բժիշկ Արամեանց հրաւիրեց Թիֆլիսի «Մեղու Հայաստանի» խմբագիր պ. Սիմէօնեանցի միջնորդութեամբ օրիորդ Մարիամ Վարձելեանին վարժուհու պաշտօնը վարելու օրիորդաց ուսումնարանում. այս պայմանով օրիորդ Վարձելեանը պէտք է ստանայ Թիֆլիսում 100 րուբլ ճանապարհի ծախս, իսկ ռօճիկ 400 ր. այսինքն 50 ր. ամսական յունվարի մէկից մինչև սեպտեմբերի մէկը։ Օրիորդ Վարձելեանց ստացաւ Թիֆլիսում պ. Սիմէօնեանցից 100 րուբլ ճանապարհի համար և այստեղ ռօճիկ մինչև յունիսի մէկը 250 րուբլ։ Մայիսի ռօճիկը տալու ժամանակ պ. Արամեանցը ասում է օրիորդին, որ յունիս ամսի մէկից նա իր վերոյիշեալ պայմանը վերջացնում է։ Այս պատճառով օրիորդը տալիս է խնդիրք Մարդասիրական ընկերութեան խորհրդին հարցնելով թէ ինչ պատճառով Արամեանցը զրկում է նրան ամառվայ երեք ամսվայ 150 րուբլուց։ Այս խնդիրքի պատասխանը օրիորդ Վարձելեանը ստանում է 26-ին յունիսի ընկերութեան նախագահից։ Այս նամակով Մարդասիրական ընկերութեան խորհուրդը մերժում է օրիորդին 150 րուբլ։ Օրիորդ Վարձելեան մնալով տարակուսեալ դիմում է տեղիս հաշտարար դատարանին որ գոնեա այս ճանապարհով ստանայ իր փողը։ Ինչպէս վերև յիշեցի այս ամսի 10-ին քննութիւն եղաւ։ Ընկերութեան կողմից պաշտպան նշանակված էր տեսուչ պ. Արամեանց, իսկ օրիորդի կողմից իր եղբայր Արշակ Վարձելեանցը։ Վերջապէս դատաւորը վճռեց պահանջել ընկերութիւնից յօգուտ օր. Վարձելեանցի 150 ր. և դատաստանական ծախս (судебныя издержки) 10 ր.։ Այս վճռին Արամեանց չը յօժարվեցաւ և կամեցաւ դիմել գաւառական դատարանը։

Վերջացնելով նամակս չեմ կարող իմ ցաւս չը յայտնել նախ՝ Մարդասիրական ընկերութեան մասին, որ իր ծառայողներին այն աստիճան է հասցնում, որ նրանք դիմում են դատաստանը. երկրորդ՝ պ. Արամեանցի մասին որ ինչպէս ուսեալ մարդ, մանկավարժ, այսպէս անարդար կերպով վարվում է մի օրիորդի հետ, և երրորդ՝ պ. Սիմէօնեանցի մասին, որ լաւ գիտենալով Բագուի Մարդասիրական ընկերութեան ինչ լինելը, ճանաչելով նախագահին և անդամներին, խորհուրդ է տուել օրիորդ Վարձելեանին թողնել Թիֆլիս և գնալ Բագու, ինչպէս գառը գայլերի մէջ մտնելու համար։ Ընկերութեան այս գործերը լաւ ընթացքին չեն հասցնի նրան։ Տաս տարուց աւելի է ինչ որ ընկերութիւնը ուսումնարան ունի,—և ինչ դրութեան մէջն է նա. ունի մինչև հարիւր աշակերտ և վաթսունի չափ աշակերտուհիք։ Ուսումը հասնում է պետական դպրոցների առաջին դասատան պրօգրամային, չը նայելով որ այսքան տարի է ուսումնարանը հիմնվել է և ընկերութեան մայր-գումարը հասնում է մինչև 50,000 րուբլու։ Ընկերութիւնը առաջին անգամ չէ որ այդպէս է վարվում ուսուցիչների հետ. նա կարծես մէկ պատճառ է որոնում ուսուցիչների դէմ, որպէս զի մին միւսի ետևից հեռացնէ նրանց։ Միայն թէ դեռ ոչ ոք քաջութիւն չէ ունեցել բողոքել հաշտարար դատարանը։

Հարկաւոր եմ համարում աւելացնել, որ ինչպէս լաւ ծանօթ օր. Վարձելեանցի հետ, օրիորդը ինձ ասել է որ մտադիր է, փողը ստանալուց յետոյ, դատաստանական ծախսը ինչ որ կը հասնի նրան, նուիրել ձեր խմբագրութեան միջնորդութեամբ Վանի սովեալներին։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Անձրիային եղանակները շարունակվում են Թիֆլիսում և նրա շրջականերում։

—

«Новости» լրագիրը լսել է որ Կովկասեան փոխարքայութիւնը դառնալու է գեներալ-նահանգապետութիւն։

—

Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ «Голосъ» լրագիրը վեց ամսով դադարեցաւ։ Յայտնի է որ «Գօլօս» լրագիրը ռուսաց թերթերից ամենատարածված թերթն է և մեծ հռչակ ունի և օտար երկիրներում։ Նա ռուս մեծ թերթերից միակն է որ հասել է 25,000 բաժանորդների թւին։ «Գօլօսի» վեց ամսով դադարելը մեծ նիւթական վնաս կը տայ նրա խմբագրութեանը։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են։ «Հայոց ուսումնարանի հոգաբարձութիւնը կամենում է երկու ուսուցիչ հրաւիրել, իւրաքանչիւրը 600 րուբլ ռօճիկով, այն ինչ ուսումնարանի ամբողջ եկամուտը տարեկան 700 րուբլ է։ Խորհուրդ կը տանք հոգաբարձութեանը նախ ապահովացնել դպրոցը և յետոյ հրաւիրել վարժապետներին։ Եթէ ոչ նոր հրաւիրվածներին էլ մի քանի ամիս չանցած, փողի պակասութեան պատճառով և տէր Սիմէօնի խորհրդով, կարձակեն, ինչպէս արդէն արել են նախկին ուսուցիչներից շատերի հետ»։

—

Այս ուրբաթ օր, յուլիսի 31-ին լինելու է Արծրունու թատրօնում հայ թատրօնասէրների ներկայացումն։ Պրօգրամը շատ լաւ է կազմված և համապատասխան է բոլորովին ամառվայ ներկայացմանը։ Կը խաղան «Ժանօ և Ժանէտ» օպէրէտ-վօդէվիլ 1 արարածով, թարգ. Գ. Շահբուդաղեանի, որին կը մասնակցեն տիկին Փաշայեան-Տէր-Գրիգորեան, պ. պ. Սուքիասեան և Միրաղեան, նոյնպէս «Երեք ապաւակներ» վօդէվիլ 1 արարուածով, թարգմ. Յ. Տէր-Գրիգորեանի, որի մէջ կը մասնակցեն տիկին Փաշայեան-Տէր-Գրիգորեան, պ. պ. Սարգսեան, Տէր-Գրիգորեան, Վարձելեան և Միրաղեան։ Վերջապէս կը լինի և Ջաւէշտ, բաղկացած երեք նօմէրներից. տիկին Փաշայեան-Տէր-Գրիգորեան կը կատարէ «Գիւղական փօստատար» պատկերը երգեցողութեամբ, պ. Տէր-Գրիգորեան կը պատմէ «Պատկերներ ժողովրդական կեանքից» և պ. Սուքիասեան կերգէ։ Ներկայացման սկիզբը $8^1/_2$ ժամին է։ Տեղերի գները սովորական են և տոմսակները կարելի է ստանալ Արծրունու թատրօնի կասսայում։

—

Քիլվար գիւղի դպրոցի հոգաբարձու պ. Մ. Յովհաննիսեան պատասխանելով «Մշակի» № 98 մէջ տպված Ղուբայի ստացած նամակին, ասում է որ Քիլվարի դպրոցը ստանում է «Մարդասիրական» ընկերութենից ոչ թէ 350 րուբլ տարեկան, այլ միայն 300 րուբլ։ Պարոնը հետեւեալ հաշիւ է անում. Բագուի Մարդաս. ընկերութենից 300 ր., Արզանդուլեանց քահանայից 1 ր. և 1879 թւից մնացած 195 ր. 71 կոպ. գումարի հետ կանի 496 րուբլ 71 կոպէկ գումարը, որից հանելով ծախս՝ մի ուսուցչի տարեկան վարձ 180 ր., գրքեր և մանր ծախսեր դպրոցի վրա 30 ր. 30 կ., ընդամենը 210 ր. 30 կ., մնում է 1881 թւի համար 286 ր. 41 կ., որ պահվում է նոյն պ. Յովհաննէսեանի մօտ։ Պ. հոգաբարձուն հաւատացնում է որ ուսման կողմից էլ դպրոցը լաւ է գնում։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են։ «Յուլիսի 23-ին տեղիս հայոց ժողովուրդը ներկայացրեց մի համառօտ և ազդու խնդիր առաջնորդական փոխանորդ գերապատիւ Գրիգոր արքեպիսկոպոս Սագինեանցին, որով պահանջում է երեք եկեղեցիների, այն է Ս. Ստեփաննոս, Ս. Լուսաւորիչ և Ս. Փրկիչ մայր-եկեղեցու հաշիւները։ Երբ երեցփոխան պ. Յովհաննէս Վանցեանցից ժողովուրդը պահանջեց մատեանները, յարգելի պարոնը փոխանակ ներկայացնելու ճիշդ ժապաւինեալ մատեանները, ներկայացրեց հատ ու կտոր մանր մունր և խառն ի խուռն թղթերի կտորներ, որոնց վրա արած էր իր նկատողութիւնները, իսկ ժապաւինեալ մատեանների հետք էլ չը կար 1879, 1880 և 1881 թւերի ընթացքում։ Դորա համար կազմվեցաւ արձանագրութիւն, որի զօ-